Արթիկ համայնքի <<Սարատակիի ՆՈՒՀ>> ՀՈԱԿ-ի

տնօրենի 2026 թվականի փետրվարի4-ի N 3-Ա հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին*

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները /չափորոշիչները/ | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը/նյութերը/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստ<br>(0.25 դրույք ) | 1) Որակավորման պահանջները՝ նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ<br>2) Ընդհանուր պահանջները. Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի պաշտոնը զբաղեցնողը պետք է<br>1.տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2.իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) Դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ<br>2) Դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից<br>3) Տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել | 1) Դիմում ( ձև 1)<br>2) անձը հաստատող փաստաթուղթ<br>3)Կրթության մասին փաստաթուղթ ( դիպլոմ)<br>4)Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ /առկայության դեպքում/<br>5)Ինքնակենսագրություն<br>6)Մեկ լուսանկար՝ 3*4չափի<br>7)Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,<br>8)Հայաստանի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **որոնք վերաբերվում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝ ա . Հայաստանի Հանրապեթության Սահմանադրությունը,<<Կրթության մասին>>, << Հանրակրթության մասին>>** «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին», «Տեսչական մարմինների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքները , Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br>բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին: | մանկավարժական գործունեության իրականացմանը<br>4) Դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի , երբ դատապարտվել է ոչ՛ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական կցագրման վկայական,<br>9)Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր ( դրանց առկայության դեպքում):<br><br>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: |
| Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը | | Դիմումների և փաստաթղթերի ընդունումը | | Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները |

| | | |
|---|---|---|
| Վայրը՝Հ.Հ Շիրակի մարզ, գյուղ Սարատակ, 6փ 12շենք., օրը՝ 2026 թ Մարտի10, ժամը՝ 11:00 | Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Սարատակի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, հեռ. 093517803: Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի <<22>> հոկտեմբեր 2024 թվական N 1981-Ա/2 հրաման ):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00-17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: | 2026 թվականի մարտի 4-ը ներառյալ |